 crowd (քրաուտ) ամբոխ, to-, խոնուիլ:
 crown (քրաուն) թագ, to-, պսակել, -prince, դահածառանգ:
 crucible (քրո՛ւսիպլ) բով, հալոց:
 crucifix (քրո՛ւսիՓիքս) խաչ, -ion, խաչելութիւն:
 crucify (քրո՛ւսիՓայ) խաչել:
 crude (քրուտ) խակ, հում, տհաս: [թիւն:
 cruel (քրո՛ւէլ) անգութ, -ty, անգթութիւն:
 cruiser (քրո՛ւզըր) յաճակաւոր (նաւ):
 crumb (քրըմ) փշրանք, to-, փշրել:
 crumble (քրը՛մպըլ) ճմռթիւն:
 crusade (քրուսէ՛յտ) խաչակրութիւն, -r, խաչակիր:
 crush (քրաչ) կոտրտել, ճզմել:
 cry (քրայ) աղաղակ, to-, աղաղակել, լալ:

crystal (քրի՛սթըլ) բիւրեղ, ապակի (ժամացոյցի), -line, բիւրեղեայ, -lize, բիւրեղացնել:

cube (քիւպ) խորանարդ:

cubit (քի՛ւպիթ) ոտնաչափ, կանգուն:

cucumber (քի՛ւքըմպըր) վարունգ:

cue (քիւ) սոյն, հիւսակ (ծամի):

cuff (քըֆ) թեկնոց, թեզանիք:

cuirass (քուիրա՛ս) զրահ, -ier, զրահաւոր:

culminate (քը՛լմինէյթ) գագաթնակէտին հասնիլ:

culprit (քը՛լքրիթ) յանցաւոր:

cultivate (քը՛լթիվէյդ) մշակել:

cultivation (քըլթիվէ՛յըն) մշակում:

culture (քը՛չըր) մշակութիւն, զարգացում:

cunning (քը՛նինկ) խորամանկ:

cup (քըփ) բաժակ, գաւաթ:

cupid (քի՛ւբիա) սիրոյ աստուած:

cupidity (քիւբի՛տիթի) ազահութիւն:

cur (քըր) անպիտան, շուն, լակոս:

curb (քըրպ) զսպել:

cure (քիւր) բժշկել, դարմանել: [թիւն:

curiosity (քիւրիա՛սիթի) հետաքրքրու-

curious (քի՛ւրիըս) հետաքրքիր:

curl (քըրլ) գանգուր, -y, գանգրահեր:

currency (քը՛րէնսի) ընթացիկ դրամ:

current (քը՛րէնթ) ընթացիկ, հոսանք:

curriculum (քըրրի՛քիւլըմ) դասընթացք:

curry (քը՛րի) խաղախորդել:

curse (քըրս) անէծք, -d, անիծեալ:

curt (քըրթ) կարճ, -ail, համառօտել:

curtain (քը՛րթըն) վարագոյր:

curve (քըրվ) կորութիւն, կոր, գիծ:

cushion (քո՛ւշըն) բարձ:

custodian (քըսթօ՛տիըն) պահապան:

- custody (քը'սթօսի) պահեստ, հսկողութեան տակ:
- custom (քը'սթըմ) սովորութիւն, մաքս, -ary, սովորական, -duty, մաքսային տուրք, -house, մաքսատուն:
- customer (քը'սթըմըր) յաճախորդ:
- cut (քըթ) կտոր, կտրուած, to-, կտրել:
- cute (քիւթ) խելացի, դրաւիչ:
- cutlass (քը'թլէս) մեծ դանակ:
- cutler (քը'թլըր) դանակագործ:
- cutthroat (քը'դթհրօթ) մարդասպան:
- cutting (քը'թինկ) կտրուած, տուր:
- cycle (սա'յըլ) շրջան, անիւ:
- cyclone (սա'յըլօն) թաթառ:
- cyclopedia (սա'յըլօփէ'տիա) համայնագիր-տակ բառարան:
- cylinder (սի'լինտըր) գլան:
- cynic (սի'նիք) շնական, ցինիք:
- cypress (սա'յըրէս) նոճի:
- czar (զար) ձար, -ina, ձարուհի, -owitz, դահաժառանգ (ձարի):

D

- Dab (տապ) մեղմ հարուած:
- dabble (տա'պլ) սրսկել:
- dad, -dy (տատ) պապիկ, պապ:
- daft (տաֆթ) յիմար, ապուշ:
- dagger (տ'ակըր) դաշոյն:
- daily (տէ'յի) օրական, -paper, օրաթերթ:
- dainty (տէ'յնթի) նուրբ, քնքուշ, ընաիր:
- dairy (տէ'յըրի) կաթնարան:
- daisy (տէ'յզի) ձընծաղիկ:
- dale (տէյլ) ձորակ, ծմակ:
- dam (տամ) թումբ, մայր (անասունի):
- damage (տա'մէճ) մնաս, կորուստ:

- dame (տէյմ) տիկին, տիրուհի:
- damn (տամ) անիծել, -ation, դատապարտութիւն:
- damp (տամբ) խոնաւ:
- damper (տամբըր) խուփ: [կուհի:
- damsel (տամսէլ) օրիորդ, սիրուն գեղջ-
- dance (տանս) պար, to-, պարել:
- dandruff (տամնարըֆ) գլխի թեփ:
- dandy (տամնտի) պճնասէր (մարդ): [ւոր:
- danger (տէյնճըր) վտանգ, -ous, վտանգա-
- dare (տէր) համարձակիլ:
- dark (տարք) մութ, սև:
- darling (տամրլինկ) սիրելի, սիրական:
- darn (տարն) կարկտան, to-, կարկտել:
- dart (տարթ) նիզակ, to-, նետել:
- dash (տաշ) ցատկել, ունայն ցոյց:
- data (տէյթա) յայտնի կամ անյայտ փաստ:
- date (տէյթ) թուական, ժամանակ:
- dative (տէյթիվ) տրական (հոլով):
- daughter (տօթըր) դուստր:
- dawn (տօն) արշալոյս:
- day (տէյ) օր, ցորեկ, -break, արշալոյս:
- daze (տէյզ) շլացնել:
- dazzle (տազլ) աչքի խտրել:
- deacon (տիքն) սարկաւազ:
- dead (տէտ) մեռած, կենազուրկ:
- deaf (տէֆ) խուլ, -ness, խուլութիւն:
- deal (տիլ) բաժնել, առևտուր ընել:
- dean (տին) վերատեսուչ:
- dear (տիր) սիրելի, սուղ: [watch etc).
- death (տէթհ) մահ, (-bed, -blow, -warrant,
- debark (տիպա'րք) ցամաք ելնել:
- debase (տիպէ'յս) ցած ցնել, անպատուել:
- debate (տիպէ'յթ) վիճարանիլ:
- debauch (տիպա'չ) շուատութիւն:
- debit (տէ'պիթ) պարտք:

- debt (տէթ) սպարտք, տալիք:
- decade (տէ՛քէյտ) տասն տարիներ:
- decamp (տիքա՛մբ) չուել (բանակի):
- decapitate (տիքա՛փիթէյթ) գլխատել:
- decay (տիքէ՛յ) քայքայում, ապականում:
- decease (տիսի՛ս) մահ, -ed, հանդուցեալ:
- deceit (տիսի՛թ) խաբէութիւն:
- deceive (տիսի՛վ) խաբել, -r, խաբեբայ:
- December (տիսէ՛մպըր) Դեկտեմբեր:
- decency (տի՛սէնսի) վայելչութիւն, սպրկեչտութիւն:
- decent (տի՛սընթ) վայելուչ, բարոյական:
- deception (տիսէ՛փչըն) խաբէութիւն:
- decide (տիսա՛յտ) վճռել, որոշել: [բակ]:
- decimal (տէ՛սիմըլ) տանորդական (կոտո-
- decision (տիսի՛ծըն) վճիռ, որոշում:
- decisive (տիսա՛յսիվ) վճռական, վերջնական:
- deck (տէք) տախտակամած (նաւի), to-,
զարդարել: [նութիւն:
- declamation (տէքլամէ՛յըն) ատենաբա-
- declaration (տիքլարէ՛յըն) հրատարակում:
- declare (տիքլէ՛ր) յայտարարել:
- declension (տիքլէ՛նչըն) հոլովում: [վել:
- decline (տիքլա՛յն) հակել, մերժել, հոլո-
- decompose (տէքըմփօ՛ղ) տարաբաղադրել:
- decorate (տէ՛քօրէյթ) զարդարել:
- decoration (տէքօրէ՛յըն) պատուանշան:
- decoy (տիքօ՛յ) թակարդ, որոգայթ:
- decrease (տիքըրի՛ս) նուազիլ, պակսիլ:
- decree (տիքըրի՛) վճիռ, հրովարտակ:
- dedicate (տէ՛տիքէյթ) նուիրել, ձօնել:
- deduce (տիտի՛ւս) հետեցնել, եզրակացնել:
- deduct (տիտը՛քթ) զեղջել, -ion, հանում:
- deed (տի՛տ) գործ, պայմանագիր:
- deem (տի՛մ) դատել, ենթադրել:
- deep (տի՛փ) խորունկ, անդունդ:

- deer (տի՛ր) եղջերու, այծեամ:
 deface (տիՓէ՛յս) եղծել, ջնջել, քերել:
 defamatory (տիՓա՛մէթօրի) նախատական:
 defame (տիՓէ՛յս) վատաճամբաւել:
 default (տիՓօ՛լթ) յանցանք: [թել:
 defeat (տիՓի՛թ) պարտութիւն, to-, յաղ-
 defence (տիՓէ՛նս) պաշտպանութիւն:
 defend (տիՓէ՛նս) պաշտպանել:
 defer (տիՓը՛ր) յետաձգել, յապաղել:
 deference (տէ՛ֆրրնս) յարգանք:
 deficiency (տիՓի՛շընսի) պակասութիւն,
 բաց (հաշուի):
 deficient (տիՓի՛շընթ) անբաւական:
 defile (տիՓա՛յլ) պղծել, ապականել:
 define (տիՓա՛յն) սահմանել, բացատրել:
 definite (տէ՛ֆինիթ) որոշ, ուղիղ, ճիշդ:
 definition (տէՓի՛նիշըն) բացատրութիւն,
 սահմանում (նշանակութեան):
 definitive (տիՓի՛նիթիվ) վճռական: [մաղրել:
 deforce (տիՓօ՛րս) յանիրաւի գրաւել, դի-
 deform (տիՓօ՛րմ) տգեղացնել:
 defraud (տիՓրօ՛տ) խարդախել, նենգել:
 defray (տիՓրէ՛յ) վճարել, մատակարարել:
 deft (տէՓթ) ճարտար, վայելուչ:
 defy (տիՓա՛յ) յասպարէզ կոչել:
 degeneracy (տիճէ՛նըրէսի) այլասերում:
 degenerate (տիճէ՛նէրէյթ) այլասերած:
 degrade (տիկրէ՛յս) աստիճանազուրկ ընել:
 degree (տէկրի՛) աստիճան:
 deity (տի՛իթի) աստուածութիւն:
 deject (տիճէ՛քդ) սրտաբեկ ընել:
 delay (տիլէ՛յ) ուշանալ: [դամաւոր:
 delegate (տէ՛լիկէյթ) պատուիրակ, պատ-
 deliberate (տէլի՛ւլըրէյթ) խորհրդածիլ:
 delicacy (տէ՛լիքէսի) նրբութիւն:
 delicate (տէ՛լիքէթ) քնքուշ, նազելի:

- delicious (տիւլի'չըս) քաղցր, անուշ:
 delight (տիւլա'յթ) բերկրութիւն: [թիւն:
 delinquency (տիւլի'նգուէնսի) պակասու-
 delirious (տիւլի'րիըս) ցնորեալ, խելագար:
 deliver (տիւլի'վըր) արձակել, տալ:
 dell (տէլ) ձորակ, ծործոր:
 delude (տիւլի'ւտ) խաբել, պատրել:
 deluge (տէլի'ւճ) հեղեղ, ջրհեղեղ:
 delusion (տիւլի'ւժըն) պատրանք:
 demand (տիւմա'նտ) պահանջ:
 demi (տէ'մի) կէս: [թիւն:
 democracy (տիւմա'քրէսի) ռամկավարու-
 democrat (տի'մօքրաթ) ռամկավարական:
 demolish (տիւմա'լիչ) կործանել, աւրել:
 demon (տի'մըն) դև, սատանայ:
 demonstrate (տէ'մանսթրէյթ) ցուցնել:
 demonstration (տէ'մանսթրէ'յըն) ցոյց:
 demoralization (տիւմօրըլիզէ'յըն) անբարո-
 յականացում: [նացնել:
 demoralize (տիւմա'րըլայզ) անբարոյակա-
 demur (տիւմի'ւո) տարակուսիլ, վարանիլ:
 denial (տինա'յէլ) մերժում, ուրացում:
 denominate (տինա'մինէյթ) անուանել:
 denomination (տինամինէ'յըն) յարանուա-
 նութիւն:
 denote (տինօ'թ) նշանակել: [պարակով):
 denounce (տինա'ունս) ամբաստանել (հրա-
 deny (տինա'յ) ուրանալ, մերժել:
 depart (տիւփա'րդ) մեկնիլ, -ure, մեկնում,
 -ment, բաժին, ճիւղ:
 depend (տիւփէ'նտ) կախում ունենալ, -ent,
 ենթակայ, ստորադաս:
 deplore (տիրլօ'ր) ողբալ:
 depopulate (տիւփա'րիւլէյթ) բնաջնջել:
 deport (տիւփօ'րթ) հեռացնել, տարագրել:

- deportation (տիփարթէ՛յշըն) տարագրու-
թիւն, աքսոր: [դրամ:
deposit (տիփա՛ղիթ) աւանդ, պահեստի
depot (տի՛փո) կայարան:
deprave (տիրրէ՛յվ) ապականել:
depress (տիփրէ՛ս) ճնշել, -ion, ճնշում:
deprivation (տէբրիվէ՛յշըն) զրկում:
deprive (տիրրա՛յվ) զրկել:
depth (տէբթէ՛) խորութիւն: [կութիւն:
deputation (տէփիւթէ՛յշըն) պատուիրա-
deputy (տէ՛փիւթի) պատուիրակ:
derange (տիրէ՛յնճ) խառնակել:
derivation (տէրիվէ՛յշըն) ծագում:
derivative (տէրի՛վէթիվ) ածանցական:
derive (տիրա՛յվ) յառաջ գալ, ծագիլ:
descend (տիսէ՛նտ) իջնել, ~ant, սերունդ:
descent (տիսէ՛նթ) զառիվայր:
describe (տիսքրա՛յվ) նկարագրել: [թիւն:
description (տիսքրի՛փշըն) նկարագրու-
descriptive (տիսքրի՛բթիվ) նկարագրական:
desecrate (տէ՛սիքրէյթ) պղծել:
desert (տէ՛զըրթ) անապատ:
desert (տիզը՛րթ) լքանել, արժանիք:
deserter (տիզը՛րթըր) դասալիք:
deserve (տիզէ՛րվ) արժանի ըլլալ:
design (տիզա՛յն) ծրագիր, գծագրութիւն:
designate (տէ՛սիկնէյթ) որոշել:
desirable (տիզա՛յրապլ) ցանկալի:
desire (տիզա՛յր) ցանկալ, բաղձալ:
desist (տիսի՛սթ) ետ կենալ:
desk (տէսք) գրասեղան, գրքակալ:
desolate (տէ՛սօլէյթ) ամայի, լքուած:
despair (տիսփէ՛ր) յուսահատութիւն:
desperate (տէ՛սիըրէթ) յուսահատ: [հել:
despise (տիսփա՛յվ) անարդել, արհամար-
despite (տիսփա՛յթ) չարութիւն:

- despot (տէսփա՛թ) բռնակալ, -ism, բռնապետութիւն, -ic, բռնապետական:
- dessert (տէզը՛րթ) աղանդել, անուշեղէն:
- destination (տէսթինէ՛յըն) վախճան:
- destiny (տէ՛սթընի) ճակատագիր:
- destitute տէ՛սթիթիւղ) կարօտ, աղքատ:
- destroy (տիսթրօ՛յ) քանդել, աւերել:
- destruction (տիսդրը՛քըն) կործանում:
- destructive (տիսդրը՛քթիւ) կործանարար:
- detach (տիթա՛չ) բաժնել, անջատել:
- detail (տիթէ՛յլ) մանրամասնութիւն:
- detain (տիթէ՛յն) ետ պահել, բանտել:
- detect (տիթէ՛քթ) երևան բերել:
- detention (տիթէ՛նըն) արգելում:
- determinate (տիթէ՛րմինէյթ) վճռում:
- determine (տիթէ՛րմին) որոշման մը գալ:
- detest (տիթէ՛սթ) գարշիլ, -able, գարշելի:
- dethrone (տէթհրօ՛ն) գահընկէց ընել:
- detriment (տէ՛թրիմէնթ) կորուստ, վնաս:
- devastate (տէ՛վըսթէյթ) աւերել:
- develop (տիվէ՛լօփ) զարգանալ, -ment, զարգացում:
- devest (տիվէ՛սթ) զրկել:
- device (տիվա՛յս) ճնարք, խորամանկութիւն:
- devil (տէ՛վլ) դև, -ish, դևային:
- devise (տիվա՛յս) կտակել:
- devoid (տիվօ՛յա) պարապ, դատարկ:
- devolve (տիվա՛լվ) փոխանցել:
- devote (տիվօ՛թ) ընծայել:
- devotion (տիվօ՛չըն) անձնուիրութիւն:
- devour (տիվա՛ուր) գիշատել:
- devout (տիվա՛ութ) բարեպաշտ:
- dew (տիւ) ցօղ:
- dexterity (տէքսթէ՛րիթի) վարպետութիւն:
- diadem (տա՛յատէմ) թագ:
- diagonal (տայա՛կօնըլ) տրամանկիւն:

- diagram (տա՛յակրամ) ուրուագիծ:
 dialect (տա՛յակէքթ) դաւառարարառ:
 dialogue (տա՛յալօկ) տրամախօսութիւն:
 diameter (տայա՛միթըր) տրամագիծ:
 diamond (տա՛յամընտ) ադամանդ:
 diary (տա՛յէրի) օրագրութիւն:
 dice (տայս) քուեսաք, զար:
 dictate (տի՛քթէյթ) թելադրել, հրամայել:
 diction (տի՛քչըն) ոճ, սասցուածք:
 dictionary (տի՛քչընէրի) բառարան:
 die (տայ) մեռնիլ:
 diet (տայէ՛թ) կանոնով առնուած կերակուր, պետական ժողով:
 differ (տի՛ֆըր) տարբերիլ:
 different (տի՛ֆրէնթ) տարբեր:
 difficult (տի՛ֆիքըլթ) դժուար:
 diffuse (տիֆի՛ւզ) ծաւալել, ճապաղել:
 dig (տիկ) փորել: [ղութիւն:
 digest (տիճէ՛սթ) մարսել, -ion, մարսո-
 dignify (տի՛կնիֆայ) մեծարել: [անհատ:
 dignitary (տի՛կնիթարի) բարձրաստիճան
 dignity (տի՛կնիթի) արժանապատուութիւն:
 dilate (տիլէ՛յթ) ընդարձակել:
 dilemma (տիլէ՛մմա) երկասյրարանութիւն:
 diligence (տի՛լիճէնս) փոյթ, ջանք:
 diligent (տի՛լիճէնթ) փութաջան:
 dim (տիմ) աղօտ, to-, նսեմացնել:
 dime (տայմ) 10 սէնթնոյ դրամ:
 diminish (տիմի՛նիշ) պակսիլ, նուազիլ:
 dimple (տի՛մըլլ) այտերու փոսիկ:
 din (տին) ադմուկ, աղաղակ:
 dine (տայն) ճաշել:
 dinner (տի՛նըր) ճաշ, հացկերոյթ:
 diocese (տա՛յօսիս) թեմ:
 dip (տիփ) ընկղմիլ:

- diploma (տիբլո՝մա) վկայական: [թիւն:
 diplomacy (տիբլո՝մէսի) դիւանագիտու-
 diplomat (տի՛բլոմաթ) դիւանագէտ, -ic,
 դիւանագիտական:
 dire (տայր) սոսկալի, ահարկու: [թիւն:
 direct (տիրէ՛քթ) ուղիղ, -ion, ուղղութիւն:
 directory (տիրէ՛քթօրի) ուղղեցոյց (գիրք):
 dirge (տըրճ) ողբ, գանձ (մեռելի):
 dirt (տըրթ) աղտ, կաւ:
 disability (տիսապի՛լիթի) անկարողութիւն:
 disable (տիսէ՛յպըլ) անկարող:
 disabuse (տիսապի՛ւզ) զգաստացնել:
 disadvantage (տիսատվա՛նթէճ) աննպաստ
 պարագայ, -ous, ձախորդ:
 disagree (տիսակրի՛) անհամաձայն, -able,
 անհամոյ, զգուելի:
 disappear (տիսափի՛ր) աներևոյթանալ:
 disappoint (տի՛սափօինթ) յուսահատեցնել:
 disapprove (տիսարրո՛ւվ) անվաւեր հա-
 մարել:
 disarm (տիսա՛րմ) զինաթափ ընել:
 disarrange (տիսարէ՛յնճ) խառնակել:
 disaster (տիզա՛սթըր) աղէտք, պատուհաս,
 -ous, աղէտաւոր:
 disband (տիսպա՛նտ) ազատ արձակել:
 disbelief (տիսպիլի՛ֆ) անհաւատութիւն:
 discard (տիսքա՛րտ) մի կողմ ձգել:
 discharge (տիսչա՛րճ) պարպել, արձակել:
 disciple (տի՛սայըլ) աշակերտ:
 discipline (տի՛սիրլին) կարգապահութիւն:
 disclose (տիսքլո՛ղ) բանել, երևան հանել:
 discomfort (տիսքը՛մֆըրթ) անհանգստու-
 թիւն:
 disconnect (տիսքընէ՛քթ) անջատել:
 disconsolate (տիքա՛նսօլէյթ) անմխիթար:
 discontent (տիսքընթէ՛նզ) դժգոհ:

- discontinue (տիսքընթի'նիու) ընդհատել:
 discord (տի'սքօրս) երկպառակու թիւն:
 discount (տի'սքաունթ) զեղջ:
 discourage (տիսքը'րէճ) վհատեցնել:
 discourse (տիսքօ'րս) խօսք, բանախօսու-
 թիւն: [բու թիւն:
 discourtesy (տիսքը'րթիտի) անքաղաքավա-
 discover (տիսքը'վըր) գտնել, հնարել:
 discredit (տիսքը'տիթ) վարկաբեկել:
 discriminate (տիսքը'մի'նէյթ) զանազանել:
 discuss (տիսքա'ս) իրաւաբանել, վիճել:
 disdain (տիսաէ'յն) արհամարհանք:
 disease (տիզի'ղ) ախտ, հիւանդութիւն:
 disembark (տիսէ'մալա'րք) ցամաք ելնել:
 disengage (տիսէ'նկէ'յճ) ազատիլ (խոս-
 տումէ):
 disfavor (տիսֆէ'յվըր) երեսէ ձգել:
 disfigure (տիսֆի'կիւր) ազեղացնել:
 disfranchise (տիսֆրա'նչայս) քաղաքացիա-
 կան իրաւունքներէ զրկել: [ուել:
 disgrace (տիսկրէ'յս) ամօթ, to-, անպատ-
 disguise (տիսկա'յս) ծպտիլ:
 disgust (տիսկը'սթ) զզուեցնել:
 dish (տիչ) պնակ, աման:
 dishearten (տիսհա'րթըն) սրտաբեկել:
 dishonest (տիսա'նէսթ) անուղղամիտ:
 dishonor (տիսա'նըր) անպատուել, -able,
 անպատիւ:
 disincline (տիսինքլա'յն) ատեցնել: [զրկել:
 disinherit (տիսինհէ'րիթ) ժառանգութենէ
 disinterested (տիսի'նթըրէսթըտ) անչահա-
 խընդիր:
 disjoin (տիսճօ'էն) զատել: [հանել:
 disjoint (տիսճօ'էնթ) խախտել, տեղէն
 dislike (տիսլա'յք) հակակրիլ:
 dislocate (տի'սլօքէյթ) տեղէն ելնել:

- dislodge (տի'սլաճ) հեռացնել, վտարել:
 disloyal (տիսլօ'յըլ) անհաւատարիմ:
 dismal (տի'զմէլ) աղետալի, տխուր:
 dismay (տիամէ'յ) վախցնել:
 dismiss (տիամի'ս) արձակել:
 dismount (տիամա'ունթ) վար իջնել:
 disobedient (տիսօպի'տիրնթ) անհնազանդ:
 disobey (տիսօպէ'յ) չհնազանդիլ:
 disorder (տիսօ'րտըր) անկարգութիւն:
 disorganize (տիսօ'րկընայդ) կազմալուծել:
 disown (տիզօ'ն) ուրանալ, դրժել:
 dispassionate (տիսբա'շընէյթ) անխռով:
 dispatch (տիսփա'չ) առաքում, հեռագիր:
 dispel (տիսփէ'լ) վռնտել, ցրուել:
 dispensary (տիսբէ'նսըրի) դեղարան:
 dispense (տիսբէ'նս) մատակարարել:
 displace (տիսփլէ'յս) տեղէն հանել:
 display (տիսփլէ'յ) ցուցնել:
 displease (տիսփլի'զ) տհաճեցնել:
 displeasure (տիսփլէ'ժըր) տհաճութիւն:
 dispose (տիսփօ'զ) դնել, կարգադրել:
 disposition (տիսբօզի'շըն) տրամադրութիւն:
 dispossess (տիսփօ'սէս) զրկել, (ստացուած-
 քէն): [մատութիւն:
 disproportion (տիսբրօփօ'րշըն) անհամե-
 disprove (տիսբրո'ւվ) հերքել:
 dispute (տիսփի'լթ) վիճել:
 disqualify (տիսքուա'լիֆայ) անյարմար:
 disregard (տիսրիկա'րա) դանց ընել:
 disrepute (տիսրէփի'լթ) վատահամբաւ:
 disrespect (տիսրէսփէ'քդ) անպատկառու-
 թիւն: [հու.թիւն:
 dissatisfaction (տիսսաթիսֆա'քշըն) դժգո-
 dissatisfy (տիսսա'թիսֆայ) դժգոհացնել:
 dissect (տիսէ'քթ) կտրել, -ion, անդամա-
 հատութիւն:

- disseminate (տիսսէ՛մինէյթ) ցանեւ, ցրուել:
 dissension (տիսէ՛նչըն) երկպառակու թիւն:
 dissent (տիսսէ՛նթ) անհամաձայնիլ:
 dissertation (տիսսէրթէ՛յշըն) ճառ, ուսում-
 նասիրու թիւն:
 dissever (տիսէ՛վըր) անջատել, բաժնել:
 dissimilar (տիսսի՛միլըր) աննման, տարբեր:
 dissipate (տի՛սսիփէյթ) ցրուել:
 dissolve (տիզա՛լվ) լուծել, հալել:
 distance (տի՛սթընս) հեռաւորու թիւն:
 distant (տիսթը՛նթ) հեռաւոր:
 distaste (տիսթէ՛յսթ) զզուեցնել:
 distend (տիսթէ՛նտ) տարածել:
 distill (տիսթի՛լ) թորել, -ery, թորանոց:
 distinct (տիսթի՛նքդ) որոշ, զատ:
 distinguish (տիսթի՛նկուիշ) զանազանել,
 -ed, նշանաւոր:
 distort (տիսթօ՛րթ) խեղաթիւրել:
 distract (տիսթրա՛քդ) ճամբէ հանել:
 distress (տիսթրէ՛ս) թշուառու թիւն:
 distribute (տիսթրի՛պիլթ) բաշխել:
 district (տի՛սթրիքդ) շրջանակ:
 distrust (տիսթրը՛սթ) անվստահու թիւն:
 disturb (տիսթը՛րպ) խռովել:
 disunion (տիսի՛ւնիըն) անմիաբանու թիւն:
 disunite (տիսիւնա՛յթ) պառակտիլ:
 disuse (տիսի՛ւզ) դործածու թենէ դադ-
 րեցնել:
 ditch (տիշ) խրամ:
 divan (տիվա՛ն) դիւան, դահաւորակ:
 dive (տայվ) բնկղմիլ, սուզիլ:
 diverge (տիվը՛րճ) խոտորիլ:
 divers (տա՛յվըրզ) զանազան, մի քանի:
 diverse (տա՛յվըրս) այլազան:
 diversion (տայվը՛րշըն) նահանջ, զբօսանք:
 divert (տի՛վըրթ) մի կողմ դարձնել:

- divest (տիվէ՛սթ) մերկացնել:
- divide (տիվա՛յտ) բաժնել:
- dividend (տի՛վիտէնտ) շահարժին:
- divination (տիվինէ՛յշըն) գուշակութիւն:
- divine (տիվա՛յն) աստուածային, երկնային,
to-, գուշակել:
- divinity (տիվի՛նիթի) աստուածութիւն:
- divisible (տիվի՛ղիպլ) բաժանելի:
- division (տիվի՛ժըն) բաժանում:
- divorce (տիվօ՛րս) ամուսնալուծութիւն:
- divulge (տիվը՛լճ) հրապարակել:
- dizzy (տիզի) գլխի դառնալը:
- do (տու) ընել:
- docile (տօ՛սիլ) հլու, դիւրանասաց:
- dock (տաք) նաւամատոյց:
- doctor (տա՛քթըր) բժիշկ, վարդապետ:
- doctrine (տա՛քթրին) վարդապետութիւն:
- document (տա՛քիւմէնթ) վաւերագիր:
- dog (տակ, տօկ) շուն: [տութիւն:
- dogma (տա՛կմա) սկզբունք, վարդապետ-
dollar (տա՛լէր) տալէր (դրամ):
- dolor (տօ՛լօր) վիշտ, -ous, վշտալի:
- domain (տօմէ՛յն) իշխանութիւն, կալուածք:
- dome (տօմ) դմբէթ:
- domestic (տօմէ՛սթիք) ընտանի, տեղական:
- dominion (տօմի՛նիըն) պետութիւն, կալ-
ուածք:
- donate (տօ՛նէյթ) նուիրել:
- donation (տօնէ՛յշըն) նուիրատուութիւն:
- donor (տօ՛նըր) նուիրատու:
- doom (տում) դատակնիք, վճիռ:
- door (տօր) դուռ, (-bell, -keeper etc.):
- dormitory (տօ՛րմիթօրի) ննջարան: [դեղ:
- dose (տօս) մի անգամէն տրուելու չափ:
- dot (տաթ) կէտ, բիծ:

- double (տը'սլլ) զոյգ , կրկին:
 doubt (տառւթ) տարակոյս , կասկած:
 dough (տօ) խմոր , հայս:
 dove (տըվ) աղաւնի:
 down (տառն) վար , (-hill, -stairs, -town etc.):
 downfall (տառնֆօ'լ) անկում:
 downtrodden (տա'ռնթրատըն) ոտնակոխ:
 dowry (տա'ռըրի) օժիտ:
 doxology (տաքսա'լօճի) փառարանութիւն:
 doze (տօզ) մրափեւ:
 draft (տրաֆթ) փոխանակագիր:
 dragon (տրա'կըն) վիշապ:
 dragoon (տրակո'ւն) հեծեւազօրք: [պեւ:
 drain (տրէ'յն) ջրմուղ , to-, ծեծեւ , պար-
 drama (տրա'մա) ողբերգութիւն: [դէն:
 drapery (տրէ'յիւրրի) վարագոյրի ասուե-
 draw (տրօ') քաշեւ , գծեւ:
 drawing (տրօ'ինկ) դժագրութիւն , քաշելը:
 dray (տրէյ) սայլ , -man, սայլապան:
 dread (տրէտ) սոսկում , -ful, սոսկալի:
 dream (տրիմ') երազ , անուրջք:
 dreary (տրէ'րի) տրտում , տխրագին:
 dress (տրէս) հագուստ , (--goods, --maker etc.):
 dribble (տրի'սլլ) կաթկթիլ:
 drift (տրիֆթ) հոսանք:
 drill (տրիլ) մարզանք:
 drink (տրինք) ըմպելի , to-, խմեւ:
 drip (տրիփ) կաթկթիլ:
 drive (տրայվ) քշեւ , վարեւ , --r, կառասպան:
 droop (տրուփ) նուաղիլ , խամրիլ:
 drop (տրափ) կաթիլ:
 drove (տրօվ) նախիր , հօտ:
 drown (տրա'ռն) խեղդուիլ , խեղդեւ:
 drudge (տրըճ) չարաչար աշխատիլ:
 drug (տրըկ) դեղ , --gist, դեղագործ:
 drum (տրըմ') թմբուկ:

- drunk (տրընք) գինով, -ard, գինեմոլ, -eness, գինովութիւն:
- dry (տրայ) չոր, ցամաք:
- dual (տի'ւըլ) կրկնակ, երկու:
- dubious (տո'ւպիրս) կասկածելի, անստոյգ:
- duchess (տը'չէս) դքսուհի:
- duck (տըք) բադ, to-, խորասուզիլ:
- ductile (տը'քթիլ) գիւրաբեկ:
- due (տիւ) պարտիք, տուրք, արժանի:
- duel (տի'ւէլ) մենամարտ:
- duke (տիւք) դուքս:
- dulcet (տը'լսէթ) քաղցրաձայն:
- dull (տըլ) բութ, բթամիտ, աղօտ:
- duly (տիւլի) ըստ արժանոյն:
- dumb (տըմ) համբ, անխօս:
- dummy (տը'մի) շինծու (մարդ):
- dungeon (տը'նճըն) զնդան, մութ բանտ:
- dupe (տուփ) խաբել, պատրել:
- duplicate (տիւբլի'քէյթ) պատճէն, to-, կրկնել, նմանցնել: [թիւն:
- durability (տիւրապի'լիթի) գիմացկունութեամբ:
- endurable (տի'ւրապլ) գիմացկուն, տևական:
- duration (տիւրէ'յըն) տևողութիւն:
- during (տի'ւրինկ) միջոցին, ատենին:
- dusk (տըսք) մթնշաղ, մութ:
- dust (տըսթ) փոշի, հող:
- duty (տի'ւթի) պարտականութիւն:
- dwarf (տուօրֆ) թզուկ, դաճաճ:
- dwell (տուէլ) բնակիլ, -er, բնակող, -ing, բնակարան:
- dwindle (տո'ւինալ) սպառիլ:
- dye (տայ) ներկ, to-, ներկել:
- dyeing (տա'յինկ) ներկարարութիւն:
- dying (տա'յինկ) մեռնող:
- dynamite (տա'յնէմայթ) ուժանակ:
- dynasty (տա'յնըսթի) հարստութիւն:

dyspepsia (ախփէ՛րսխա) դժուարամար-
սու թիւն: [սու թիւն ունեցող:
dyspeptic (ախփէ՛րթիք) դժուարամար-

E

Each (իչ) իւրաքանչիւր, ամէն մէկը:
eager (ի՛կըր) ըղձակաթ, --ly, անձկանօք:
eagle (ի՛կըլ) արծիւ: [etc.):
ear (իր) ականջ, (--ache, --cap, --drop, --drum
earl (ըրլ) կոմս:
early (ը՛րլի) կանուխ, նախկին:
earn (ըրն) վաստակիլ, --ings, վաստակ:
earnest (ը՛րնէսթ) ջերմեռանդ, անկեղծ:
earth (ըրթէ) երկիր, հող, --enware, խեցե-
ղէն ամաններ, --liness, աշխարհասիրու-
թիւն, --ly, հողեղէն, աշխարհային, --
quake, երկրաշարժ, --worm, գեանի որդ:
ease (ի՛դ) հանգիստ, անդորրութիւն:
east (իսթ) արևելք:
Easter (ի՛սթըր) Մեծ Չատիկ:
eastern (ի՛սթըրն) արևելեան:
easy (ի՛դի) դիւրին, հեշտ:
eat (իթ) ուտել, --able, ուտելիք:
ebb (էպ) տեղատուութիւն: [կեդրոն:
eccentric (էքսէ՛նթրիք) անկանոն, արտա-
ecclesiastic (էքլի՛զիասթիք) եկեղեցական:
echo (է՛քօ) արձագանք:
eclectic (էքլէ՛քթիք) ընտրողական:
eclipse (իքլի՛բս) խաւարում (արևի կամ
լուսնի):
ecliptic (իքլի՛թիք) ծիր խաւարման:
economic (էքօնա՛միք) տնտեսագիտու-
թիւն: [տնտեսագիտութիւն:
economics (իքօնա՛միքս) քաղաքական տըն-

- economy (իքօնամի) խնայողութիւն:
- eddy (է՛տի) հոսանք, (ջրի, օդի):
- Eden (ի՛տըն) Եդեմ, դրախտ:
- edge (է՛ճ) եզր, շրթունք, բերան (դանակի):
- edible (է՛տիպլ) ուտելիք:
- edict (էտիքդ) հրովարտակ:
- edification (էտիֆիքէ՛յճըն) ուսուցում:
- edifice (էտի՛ֆիս) շինուածք, շէնք:
- edify (է՛տիֆայ) զարգացնել: [բական:
- editor (է՛տիթըր) խմբագիր, --ial, խմբագ-
- educate (է՛ճիւքէյթ) դաստիարակել:
- education (է՛ճիւքէ՛յճըն) կրթութիւն:
- efface (էֆէ՛յս) ջնջել, աւրել: [նաւոր:
- effect (էֆֆէ՛քդ) արդիւնք, --ual, արդիւ-
- effeminacy (էֆֆէ՛մինէսի) կանացիութիւն:
- effeminate (էֆֆէ՛մինէյթ) կանացի:
- efficiency (էֆի՛չընսի) կարողութիւն, պատ-
- րաստականութիւն:
- efficient (էֆի՛չընթ) կարող:
- effigy (է՛ֆիճի) պատկեր, նմանութիւն:
- effort (է՛ֆֆըրթ) ճիգ, ջանք:
- effuse (էֆֆի՛ւզ) թափիլ, հոսիլ:
- egg (էկ) ձու, հաւկիթ:
- ego (իկօ) ես, --ism, եսականութիւն, --ist, եսական, --tism, եսասիրութիւն, --tist, եսամոլ: [ութսուն:
- eight (էյթ) ութ, --een, տասնևութ, --y,
- either (ի՛տէր) երկուքէն մէկը:
- ejaculate (իճա՛քիւլէյթ) բացադանջել:
- eject (իճէքթ) արտաքսել: [ձեռք բերել:
- elaborate (իլա՛պօրէ՛յթ) աշխատութեամբ
- elapse (իլա՛բս) սահիլ, անցնիլ:
- elastic (իլա՛սթիք) առածգական:
- elate (իլէ՛յթ) բարձրամիտ, ուռած:
- elation (իլէ՛յճըն) գոռոզութիւն:
- elbow (է՛լպօ) արմուկ:

- elder (է'լտըր) ծեր, աւագ (պաշտօնեայ):
 elect (իլէ'քդ) ընտրել, --ion, ընտրու թիւն,
 --ive, ընտրական, --or, ընտրող, --oral,
 ընտրողական:
- electric (իլէ'քդրիք) էլեքտրական, --ian, է-
 լեքտրագէտ, --ity, էլեքտրականութիւն:
- electrify (իլէ'քդրիֆայ) էլեքտրականացը-
 նել:
- elegant (է'լիկէնթ) շքեղ, ընտիր:
- elegy (է'լիճի) ողբերգ:
- element (է'լիմընթ) տարր, --al, տարրական,
 --ary, նախնական:
- elephant (է'լիֆընթ) փիղ:
- elevate (է'լիվէյթ) բարձրացնել:
- eleven (էլէ'վըն) տասնևմէկ:
- eligible (է'լիճիպլ) ընտրու թեան արժանի:
- eliminate (էլի'մինէյթ) արտաքսել:
- elk (էլք) եղջերու, եղնիկ:
- elm (էլմ) կնճենի (ծառ):
- elocution (էլօքի'ւշըն) ճարտասանութիւն:
- elogy (է'լօճի) գովեստ, գրուագ:
- elope (իլօ'փ) փախչիլ (գաղտնի):
- eloquence (է'լօքուընս) պերճախօսութիւն:
- eloquent (է'լօքուէնթ) պերճախօս:
- else (էլս) ուրիշ, --where, ուրիշ տեղ, --wise,
 ուրիշ կերպով:
- elucidate (իլո'ւսիտէյթ) լուսարանել:
- elude (իլի'լտ) խոյս տալ:
- elusion (իլի'լտըն) փախուստ, պատրանք:
- Elysian (իլի'ժիըն) Ելիսեան:
- emancipate (իմա'նսիփէյթ) ազատել:
- embalm (էմպա'մ) դմռսել: [գելու մ':
- embargo (էմպա'րկօ) նաւարկութեան ար-
- embark (էմպա'րք) նաւի մէջ դնել:
- embarrass (էմպա'րէս) շփոթել:
- embassador (էմպա'սէտըր) դեսպան:

- embassy (է' մ'պէսի) դեսպանութիւն:
 emblem (է' մ'պլէմ) խորհրդանշան:
 embody (է' մ'պա'տի) մարմնացնել:
 embrace (է' մ'պրէ'յս) դրկել:
 embroider (է' մ'պրա'յաբը) ասեղնագործել,
 -յ, ասեղնագործութիւն:
 embroil (է' մ'պրա'յլ) խառնակել, շփոթել:
 embryo (է' մ'պրիօ) սաղմ:
 emend (իմէ'նտ) բարեփոխել:
 emerald (է' մ'րրէլա) զմրուխտ:
 emerge (իմը'րճ) դուրս ելնել, -ncy, ելք:
 emigrant (է' մ'իկրէնթ) գաղթական:
 emigrate (է' մ'իկրէյթ) գաղթել: [թիւն:
 eminence (է' մ'ինընս) բարձրապատու
 eminent (է' մ'ինէնթ) բարձրաստիճան:
 emissary (է' մ'իսէրի) սուրհանդակ, լրտես:
 emmet (է' մ'էթ) մրջիւն:
 emollient (է' մ'օ'լիէնթ) մեղմացուցիչ:
 emotion (իմօ'չըն) յուզում:
 emperor (է' մ'բըբըբ) կայսր:
 emphasis (է' մ'ֆըսիս) ազդուութիւն:
 emphasize (է' մ'ֆասայզ) շեշտել:
 emphatic (է' մ'ֆա'թիք) ազդու:
 empire (է' մ'բայր) կայսրութիւն:
 employ (է' մ'բլօ'յ) գործածել, գործ տալ,
 -e, գործաւոր, -er, գործատէր:
 empower (է' մ'բա'ուըր) արտօնել:
 empress (է' մ'բրէս) կայսրուհի:
 empty (է' մ'բդի) դատարկ, պարապ:
 emulate (է' մ'իւլէյթ) մրցիլ, հետամտիլ:
 emulation (է' մ'իւլէ'յըն) բարինախանձ:
 enable (է' նէ'յալ) զօրութիւն տալ:
 enact (է' նա'քդ) կատարել, սահմանել:
 encamp (է' նքա'մը) բանակել:
 chain (է' նչէ'յն) շղթայել:
 enchant (է' նչա'նթ) դիւթել, հրապուրել:

- encircle (էնսի'րգլ) շրջապատել:
 enclose (էնգլօ'ղ) ներփակել:
 encompass (էնգը'մբաս) շրջապատել:
 encounter (էնքա'ունթըր) պատահում,
 ընդհարում:
 encourage (էնքը'րէճ) քաջալերել: [բար]:
 encroach (էնգրօ'չ) գրաւել (աստիճանա-
 encumber (էնքը'մպէր) խոչընդոտ ըլլալ:
 encumbrance (էնքը'մպրէնս) արգելք:
 encyclopaedia (էնսայգլօփի'տիա) հանրա-
 գիտակրթութիւն:
 end (էնս) ծայր, եզր, վերջ, -less, անվերջ:
 endanger (էնսէ'յնճըր) վտանգել:
 endeavor (էնսէ'վըր) ճիգ թափել, ջանալ:
 endorse (էնսօ'րս) վաւերացնել:
 endow (էնտա'ու) նուիրել, -ment, նուէր:
 endure (էնսի'ւր) դիմանալ, կրել:
 enemy (է'նըմի) թշնամի: [դոս]:
 energetic (էնըրճէ'թիք) աշխոյժ, եռան-
 energy (է'նըրճի) եռանդ, աւիւն:
 enfeeble (էնֆի'ւլ) տկարացնել:
 enforce (էնֆօ'րս) բռնադատել, ստիպել:
 enfranchise (էնֆրա'նչայզ) ազատել:
 engage (էնկէ'յճ) խոստանալ, պայմանաւո-
 րել, --ment, ժամադրութիւն, նշանադր-
 րութիւն:
 engender (էնճէ'նարը) ծնիլ, յառաջ բերել:
 engine (է'նճին) շոգեշարժ մեքենայ:
 engineer (էնճինի'ր) մեքենագէտ:
 English (է'նկլիշ) անգլիական: [րիչ]:
 engrave (ինկրէ'յվ) փորագրել, -r, փորագ-
 enjoy (էնճօ'յ) վայելել, դուարձանալ:
 enkindle (էնքի'նարլ) բորբոքիլ:
 enlarge (էնլա'րճ) ընդարձակել:
 enlighten (էնլա'յթըն) լուսաւորել:
 enlist (էնլի'սթ) ցուցակագրել:

- enmity (է'նմիթի) թշնամութիւն:
 enormous (ինօ'րմըս) ահագին, անչափ:
 enough (էնը'ֆ) բաւական, բաւ:
 enrage (էնրէ'յճ) զայրացնել, գրգռել:
 enrapture (էնրա'րչիւր) զմայլելի:
 enravish (էնրա'վիչ) յափշտակել (միտքը):
 enrich (էնրի'չ) հարստացնել:
 enroll (էնրօ'լ) արձանագրել:
 ensign (է'նսայն) դրօշակ, նշանակ:
 enslave (էնսլէ'յվ) գերել:
 ensue (էնսի'ւ) հետևիլ, յաջորդել:
 entangle (էնթա'նկլ) խառնակել:
 enter (է'նթըր) մտնել, արձանագրուիլ:
 enterprise (է'նթըրըրայզ) ձեռնարկ:
 entertain (էնթըրթէ'յն) հիւրասիրել, --ment,
 խնճոյք:
 enthrone (էնթէ'րօ'ն) գահ նստեցնել:
 enthusiasm (էնթէ'ի'ւզիազմ) եռանդ:
 enthusiast (էնթէ'ի'ւզիասթ) եռանդոտ, մո-
 լեռանդ:
 entice (էնթա'յս) հրապուրել, որսալ:
 entire (էնթա'յր) ամբողջ, համայն:
 entitle (էնթա'յթլ) տալ, (անուն, տիտղոս):
 entrance (է'նթրանս) մուտք:
 entrap (էնթրա'փ) որսալ, (թակարդով):
 entreat (էնթրի'թ) աղերսել, խնդրել:
 entry (է'նթրի) մուտք, անցք:
 entwine (էնթուա'յն) փաթթել, կապել:
 enumerate (ինի'ւմըրէյթ) համրել:
 enunciate (ինը'նչիէյթ) արտայայտել, ար-
 տասանել:
 envelop (էնվէ'լօփ) պահարան:
 envelope (է'նվէլօփ) ծրարել:
 environ (էնվա'յրն) շրջապատ, --ment, շրջ-
 ջան, շրջապատում:
 envoy (է'նվօյ) պատգամաւոր:

- envy (էնվի) նախանձ:
 epaulet (է'փօլէթ) ուսանոց:
 epic (է'փիք) դիւցազներգութիւն:
 epicurean (էփիքի'ւրիէն) հեշտական:
 epidemic (էփիաէ'միք) տարափոխիկ:
 epigram (է'փիկրամ) կարճ և սրամիտ բանաստեղծութիւն:
 epigraph (է'փիկրաֆ) մականգրութիւն:
 epileptic (էփիլէ'քիք) լուսնոտ:
 epilogue (է'փիլակ) վերջաբան: [թիւն:
 episcopate (էփի'սքօքէյթ) եպիսկոպոսութիւն:
 episode (է'փիսօս) պատահար, դէպք:
 epistle (իփի'սլ) նամակ, թուղթ:
 epitaph (է'փիթաֆ) տապանագիր:
 epoch (է'փաք) շրջան (պատմական):
 equal (ի'քուըլ) հաւասար, --ity, հաւասարութիւն, --ize, հաւասարցնել:
 equation (էքուէ'չըն) հաւասարութիւն:
 equator (էքուէ'յթըր) հասարակած, --ial, հասարակածային: [կշռութիւն:
 equilibrium (իքուիլի'պրիբմ) հաւասարաւորութիւն:
 equinox (ի'քուինօքս) գիշերահաւասար:
 equip (ի'քուիփ) սպառազինել:
 equitable (է'քուիթապլ) արդար, ճիշդ:
 equity (է'քուիթի) արդարութիւն:
 equivalent (իքուի'վէլէնթ) համարժէք:
 equivocal (իքուի'վօքըլ) երկդիմի:
 era (ի'րա) շրջան (ժամանակի):
 eradicate (իրա'տիքէյթ) արմատախիլ ընել:
 erase (իրէ'յս) ջնջել, աւրել:
 ere (էր) նախ քան:
 erect (էրէ'քդ) ուղիղ, շիտակ, to--, շինել, --ion, շէնք:
 err (ըր) սխալիլ, --able, սխալական:
 errand (էրան'նտ) պատուիրակութիւն:
 errant (էրանթ) թափառաշրջիկ:

- erroneous (էրրօ՛նիլըս) սխալական:
 error (է՛րըր) սխալ, յանցանք:
 eruption (էրը՛փչըն) ժայթքում:
 escape (էսքէ՛յփ) փախուստ, փախչիլ:
 escort (էսքօ՛րդ) ուղեկից, պահապան:
 escort (էսքօ՛րդ) ուղեկցիլ:
 especial (էսփէ՛շըլ) մասնաւոր:
 espouse (էսբա՛ուղ) ամուսնանալ:
 espy (էսփա՛յ) գիտել, հսկել:
 esquire (էսքուա՛յր) ասպետ:
 essay (է՛սսէյ) շարագրութիւն:
 essence (է՛սընս) էութիւն, գոյութիւն:
 essential (էսսէ՛նշըլ) էական, կարևոր:
 establish (էսթա՛պլիշ) հաստատել, -ment,
 հաստատութիւն:
 estate (էսթէ՛յթ) վիճակ, անշարժ կալ-
 ուածք, աստիճան (ընկերային):
 esteem (էսթի՛մ) յարգ, արժէք:
 esthetic (էսթհէ՛թիզ) գեղագիտական:
 estimable (է՛սթիմապլ) յարգելի:
 estimate (է՛սթիմէյթ) արժէք կտրել:
 estrange (էսթրէ՛յնճ) օտարացնել:
 eternal (ի՛թըրնէլ) յաւիտենական: [թիւն:
 eternity (իթը՛րնիթի) յաւիտենականու-
 ether (ի՛թհըր) եթեր, -eal, եթերային, օ-
 դային:
 ethic (է՛թհիք) բարոյական:
 ethics (է՛թհիքս) բարոյագիտութիւն:
 ethnology (էթհնա՛լօճի) ցեղաբանութիւն:
 etymology (էթիմա՛լօճի) ստուգաբանու-
 թիւն:
 eucharist (ի՛ւքէրիսթ) պատարագ:
 eulogize (ի՛ւլօճայզ) դրուատել:
 eulogy (ի՛ւլօճի) ներբող, գովեստ:
 eunuch (ի՛ւնըք) նիրքինի:
 euphonic (իւֆօ՛նիք) ներդաշնակ:

- euphony (ի'ւ Փօնի) քաղցրահնչիւն:
 European (իւրօփի'էն) Եւրոպական:
 evacuate (իվա'քիւէյթ) դատարկել:
 evade (իվէ'յա) խուսափիլ:
 evangel (իվա'նճէլ) աւետիս, -ic, ical, աւետարանական, -ist, աւետարանիչ, -ize, աւետարանի բերել:
 evaporate (իվա'փօրէյթ) շոգիացնել:
 evasion (իվէ'յթըն) փախուս:
 eve (իվ) երեկոյ:
 even (ի'վն) հարթ, հաւասար, նոյնպէս:
 evening (ի'վնինկ) երեկոյ: [ի/ց:
 event (իվէ'նթ) դիպուած, -ful, արկածա-
 eventual (իվէ'նչիւալ) վերջնական:
 ever (է'վըր) միշտ, (-glade, -green, -lasting, -living, -more etc.):
 every (է'վըրի) իւրաքանչիւր, (-body, -day, -one, -thing, -where):
 evidence (է'վիտընս) ապացոյց:
 evident (է'վիտընթ) յայտնի:
 evil (ի'վլ) չար, յոռի, չարիք, ձախող:
 evince (իվի'նս) յայտնի, ապացուցուած:
 evoke (իվօ'ք) յառաջ կանչել: [ջում:
 evolution (էվօլի'ւշըն) բնաշրջում, բարեշրջ-
 evolve (իվա'լվ) զարգացնել:
 exact (էկզա'քդ) ճիշդ, ճշգրիտ:
 exaggerate (էկզա'ճիրէյթ) չափազանցել:
 exalt (էկզո'լթ) բարձրացնել:
 examination (էկզամինէ'յըն) քննութիւն:
 examine (էկզա'մին) քննել:
 example (էկզա'մըլ) օրինակ:
 exasperate (էկզա'սըրէյթ) գայրացնել:
 exceed (էքսի'տ) չափն անցնել, -ing, չափազանց:
 excel (էքսէ'լ) գերազանցել:
 excellence (է'քսէլընս) գերազանցութիւն:

- excellent (էքսէ'լընթ) գերազանց, խիստ
 ընտիր: [բարակ տաշեղ:
 excelsior (էքսէ'լսիօր) շատ աւելի բարձր,
 except (էքսէ'բթ) իրաց առեալ, բացի:
 exception (էքսէ'բշըն) բացառութիւն:
 excess (էքսէ'ս) ծայրայեղութիւն, -ive,
 ծայրայեղ:
 exchange (էքսչէ'յնճ) փոխանակել:
 excise (էքսա'յզ) մաքս:
 excite (էքսա'յթ) գրգռել, յուզել:
 exclaim (էքսզլէ'յմ) աղաղակել:
 exclamation (էքսզլամէ'յշըն) աղաղակ:
 exclude (էքսքլո'ւտ) վնասել:
 exclusion (էքսքլո'ւժըն) արտաքսում:
 exclusive (էքսզլո'ւզիվ) դուրս թողուած
 (հաշուէն): [դրել, նշումել:
 excommunicate (էքսզկմի'ւնիքէյթ) բանա-
 excursion (էքսզը'րշըն) զբօսաշրջութիւն:
 excuse (էքսքի'ւզ) ներողութիւն: [տել:
 execute (է'քսէզիւթ) գործադրել, գլխա-
 executive (էքսէ'զիւթիվ) գործադիր, պետ:
 executor (էկզէ'զիւթըր) խնամակալ, գոր-
 ծադիր:
 exempt (էկզէ'մթ) ազատել, արձակել:
 exercise (է'քսըրսսյզ) հրահանգ, մարզանք:
 exert (էկզը'րթ) ջանալ, -ion, ջանք:
 exhale (էքսհէ'յլ) արտաշնչել: [ռում:
 exhaust (էկզօ'սթ) սպառիլ, -ion, սպա-
 exhibit (էքզի'պիթ) ցուցնել, -ion, ցուցա-
 հանդէս:
 exhilarate (էկզի'լէրէյթ) զուարճացնել:
 exhort (էկզօ'րդ) խրախուսել, -ation, խը-
 րախոյս:
 exile (է'քսայլ) աքսորել:
 exist (էքզի'սթ) ըլլալ, -ence, գոյութիւն:
 exit (է'քսիթ) դուրս ելնել:

- exodus (է'քսօտըս) ելք:
 exonerate (էքսօ'նրրէյթ) արդարանալ
 (ամբաստանութենէ մը):
 expand (էքսբա'նա) տարածել:
 expanse (էքսբա'նս) տարածութիւն:
 expect (էքսբէ'քդ) ակնկալել, -ancy, -ation,
 ակնկալութիւն:
 expedition (էքսբէտի'չըն) արշաւանք:
 expel (էքսբէ'լ) արտաքսել, վռնտել:
 expend (էքսբէ'նտ) ծախսել, վատնել:
 expenditure (էքսբէ'նտիչիւր) ելք, ծախք:
 expense (էքսբէ'նս) ծախք:
 expensive (էքսբէ'նսիվ) սուղ:
 experience (էքսբի'րիընս) փորձառութիւն:
 experiment (էքսբէ'րիմէնթ) փորձ:
 expert (է'քսբըրդ) փորձառու, վարպետ:
 expiate (է'քսբիէյթ) քաւել:
 expire (էքսբա'յր) վերջանալ, մեռնիլ:
 explain (էքսբլէ'յն) բացատրել: [թիւն:
 explanation (էքսբլէ'նէ'յչըն) բացատրու-
 explicate (է'քսբլիքէյթ) մեկնել:
 explicit (էքսբլի'սիթ) բացայայտ, պարզ:
 explode (էքսբլօ'տ) պայթիլ: [թիւն:
 exploration (էքսբլօրէ'յչըն) խուզարկու-
 explore (էքսբլօ'ր) խուզարկել:
 explosion (էքսբլօ'թըն) պայթիւն:
 explosive (էքսբլօ'ղիվ) պայթուցիկ:
 exponent (էքսբօ'նընթ) յայտարար:
 export (էքսբօ'րթ) արտածել:
 expose (էքսբօ'զ) ցուցնել, պարզել:
 exposition (էքսբօզի'չըն) ցուցահանդէս,
 բացատրական շարադրութիւն:
 expound (էքսբա'ունտ) բացատրել:
 express (էքսբրէ'ս) արտայայտել, ղրկել,
 ճեպընթաց շոգեկառք, ապրանք փոխա-
 դրող:

- expression (էքսքրէ'չըն) արտայայտու թիւն:
 expulsion (էքսքը'լչըն) արտաքսում:
 exquisite (է'քսքուիզիթ) պատուական:
 extemporaneous (էքսթէմփօրէ'յնիըս) յան-
 պատրաստից:
 extend (էքսթէ'նտ) երկնցնել, տարածել:
 extension (էքսթէ'նչըն) տարածում:
 extent (էքսթէ'նթ) տարածութիւն:
 exterior (էքսթի'րիըր) արտաքին:
 exterminate (էքսդը'րմինէյթ) բնաջնջել:
 external (էքսդը'րնալ) արտաքին:
 extinct (էքսթի'նքդ) մարած:
 extinguish (էքսթի'նկուիչ) մարիլ:
 extol (էքսթօ'լ) գովել:
 extort (էքսդօ'րթ) հարստահարել:
 extra (է'քսդրա) յաւելում:
 extract (էքսդրա'քդ) հանել, քամել:
 extract (է'քսդրաքդ) քաղում: [կարգի:
 extraordinary (էքսդրօ'րտինէրի) արտաքոյ
 extravagance (էքսթրա'վէկընս) շռայլու-
 թիւն:
 extravagant (էքսթրա'վէկընթ) շռայլ:
 extreme (էքսդրի'մ) վերջին ծայր:
 extremity (էքսդրէ'միթի) ծայրայեղութիւն:
 exude (էքսի'ւտ) քրտնիլ, թորիլ:
 exult (էքդը'լթ) ցնծալ, -ation, ցնծութիւն:
 eye (այ) աչք, -ball, բիր, -brow, յօնք,
 -glass, ակնոց, -lash, արտևանունք, -lid,
 կոպ, թարթիչ, -sight, տեսողութիւն,
 -witness, ականատես վկայ:

F

- Fable (ֆէ'յալ) առասպել: [չէնք:
 fabric (ֆա'պրիք) հիւսում կառուցել, կառուցանել:

fabricate (Ֆա'պրիքէյթ) հիւսել, շինել:
 fabulist (Ֆա'պիւլիսթ) առասպելաբան:
 fabulous (Ֆա'պիւլըս) առասպելական, շին-
 ծու:

face (Ֆէյս) երես, դէմք, դիմաց:

facet (Ֆա'սէթ) փոքր հարթ երես:

facile (Ֆա'սիլ) դիւրին, հեշտ:

facilitate (Ֆասիլիթէյթ) դիւրացնել:

facility (Ֆասիլիթի) դիւրութիւն:

fact (Ֆաքթ) իրողութիւն, փաստ:

faction (Ֆա'քշըն) կուսակցութիւն (պա-
 ոսկտած): [պատկիչ:

factor (Ֆա'քդըր) գործակատար, բազմա-

factory (Ֆա'գթօրի) գործարան:

faculty (Ֆա'գըլթի) կարողութիւն (մտքի),
 բժշկական կամ ուսուցչական մարմին:

fad (Ֆատ) նորաձևութիւն:

fade (Ֆէյս) թառամիլ, տեղունիլ:

fail (Ֆէյլ) պակսիլ, թերանալ:

failure (Ֆէ'յլըր) անյաջողութիւն, սնան-
 կութիւն:

faint (Ֆէյնթ) նուաղում:

fair (Ֆէր) գեղանի (կին), պայծառ (օր),
 ուղիղ, արդար, տօնավաճառ, -haired,
 -minded, -natured etc.):

fairy (Ֆէ'րի) փէրի, յաւերժահարս:

faith (Ֆէյթհ) հաւատք, հաւատարմու-
 թիւն, -full, հաւատարիմ, -less, անհա-
 վատարիմ:

fall (Ֆօլ) անկում, աշուն, ջրվէժ:

fallacious (Ֆալէ'յշըս) սուտ, ստայօղ:

fallacy (Ֆա'լէսի) խաբէութիւն, սուտ:

false (Ֆօլս) կեղծ, սուտ, սխալ:

falsify (Ֆօլսի'Ֆայ) ստել, խարդախել:

falter (Ֆօ'լթըր) վարանիլ:

fame (Ֆէյմ) համբաւ, լաւ անուն:

- familiar (Փամիլիէր) մտերիւմ, ընտանի:
 family (Փամիլի) ընտանիք:
 famine (Փամին) սով:
 famish (Փամիչ) սովամահ ըլլալ:
 famous (Փէյմըս) համբաւաւոր:
 fan (Փան) հովահար:
 fanatic (Փանաթիք) մոլեռանդ, կրօնա
 մոլ, -ism, մոլեռանդութիւն:
 fancy (Փանսի) երևակայութիւն:
 fantastic (Փանթաթիք) երևակայական:
 fantasy (Փանթասի) երևակայութիւն:
 far (Փար) հեռու, -away, հեռաւոր, -sighted,
 հեռատես:
 farce (Փարս) խեղկատակութիւն:
 fare (Փէր) վճար (կառքի, մուտքի ևլն.):
 farewell (Փէյրուէլ) վերջին բարև:
 farm (Փարմ) ագարակ, -er, երկրագործ:
 farther (Փարթէր) աւելի հեռու:
 farthest (Փարթէսթ) ամենէն հեռու:
 fascinate (Փասինէյթ) դիւթել:
 fashion (Փաշըն) նորաձեւութիւն: [թիւն:
 fast (Փասթ) արագ, ամուր, ծոմապահու-
 fat (Փաթ) գեր, պարարտ, ճարպ:
 fatal (Փէյթէլ) մահացու:
 fate (Փէյթ) ճակատագիր, բաղդ:
 father (Փաթէր) հայր, -in law, կենդայր,
 -land, հայրենիք: [-less, անյատակ:
 fathom (Փատհըմ) գրկաչափ, խորութիւն,
 fatigue (Փաթիկ) յոգնութիւն:
 faucet (Փօսէթ) ծորակ:
 fault (Փօլթ) սխալ, պակասութիւն:
 favor (Փէյվըր) նպաստ, շնորհք, բարե-
 բարութիւն:
 favorite (Փէյվըրիթ) սիրածը, սիրելի:
 fear (Փիր) վախ, -ful, սոսկալի: [թիւն:
 feasibility (Փիգիալիթի) հնարաւորու-

- feasible (Ֆի'զիսլլ) հնարաւոր:
- feast (Ֆիսթ) խնճոյք, տօն, վայելք:
- feat (Ֆիթ) շահատակութիւն, հնարք:
- feather (Ֆէ'տէր) փետուր:
- feature (Ֆի'չըր) կերպարանք, դէմք:
- federal (Ֆէ'տըրալ) դաշնակցական:
- federate (Ֆէ'տըրէյթ) դաշնակից:
- federation (Ֆէտըրէ'յըն) դաշնակցութիւն:
- fee (Ֆի) վարձք, վճար: [տկարամիտ:
- feeble (Ֆի'պլ) տկար, ապիկար, -minded,
- feed (Ֆիտ) կերակուր, to-, կերակրել:
- feel (Ֆիլ) զգալ, շօշափել, -ing, զգացողութիւն:
- feet (Ֆիթ) ոտքեր:
- feign (Ֆէյն) կեղծել, ձևացնել:
- felicitate (Ֆէլի'սիթէյթ) խնդակցիլ:
- fell (Ֆէլ) անգութ, to-, գետին ձգել:
- fellow (Ֆէ'լօ) մարդ, ընկեր, անդամ:
- fellowship (Ֆէ'լօշիփ) ընկերակցութիւն:
- felony (Ֆէ'լօնի) քրէական յանցանք:
- felt (Ֆէլթ) թաղիք, կատարեալ feel բայի:
- female (Ֆի'մէյլ) էգ, իգական, կին:
- feminine (Ֆէ'մինին) կանացի:
- fence (Ֆէնս) ցանկապատ:
- fiend (Ֆէնտ) արգիլել, խափանել:
- ferment (Ֆը'րմէնթ) յուղել, խմորել:
- ferocious (Ֆիրօ'չրս) անազորոյն, վայրենի:
- ferocity (Ֆիրօ'սիթի) գազանութիւն:
- ferry (Ֆէ'րի) նաւ, նաւամատոյց, (գետի):
- fertile (Ֆը'րթիլ) բարեբեր, պտղատու:
- fertility (Ֆըրթի'լիթի) պտղաբերութիւն:
- fertilize (Ֆը'րթիլայզ) շահագործել, պրտաբերել:
- fervent (Ֆը'րվէնթ) եռանդուն:
- fervor (Ֆը'րվըր) եռանդ, ջերմութիւն:
- festal (Ֆէ'սթըլ) տօնային, ուրախական:

- festival (Ֆէ'սթիվըլ) տօնախմբութիւն:
 fete (Ֆէյթ) հանդէս, տօն:
 fetter (Ֆէ'թըր) ոտնակապ:
 feud (Ֆիւտ) թշնամութիւն, աւատ:
 feudal (Ֆի'ւտըլ) աւատական:
 fever (Ֆի'վըր) տենդ, -ish, տենդային:
 few (Ֆիւ) քանի մը, սակաւ, քիչ:
 fib (Ֆիպ) անչարամիտ սուտ:
 fiber (Ֆա'յպըր) բարակ թել, նեարդ:
 fickle (Ֆի'քլ) փոփոխական:
 fiction (Ֆի'քշըն) շինծու, վէպ:
 fiddle (Ֆի'տլ) ջութակ:
 fidelity (Ֆիաէ'լիթի) հաւատարմութիւն:
 field (Ֆի'լտ) դաշտ, ասպարէզ:
 fiend (Ֆի'նտ) թշնամի, սատանայ:
 fierce (Ֆիրս) վայրագ, կատաղի:
 fiery (Ֆա'յրի) կրակոտ, հրեղէն:
 fifty (Ֆի'ֆթի) յիսուն:
 fig (Ֆիկ) թուղ:
 fight (Ֆա'յթ) կռիւ, պատերազմ:
 figurative (Ֆի'կիւրատիվ) փոխաբերական:
 figure (Ֆիկի'ւր) պատկեր, կերպարանք,
 ձև, թուանշան:
 filament (Ֆի'լէմընթ) բարակ թել:
 file (Ֆայլ) շարք, կարգ, խարտոց:
 filial (Ֆի'լիըլ) որդիական:
 fill (Ֆիլ) լեցնել, յագուրդ տալ:
 film (Ֆիլմ) մաշկ, թաղանդ:
 filter (Ֆի'լթըր) քամոց, -ate, զտել:
 filth (Ֆիլթհ) աղտ, -y, աղտոտ:
 final (Ֆա'յնըլ) վերջնական:
 finance (Ֆինա'նս) ելեմուտք, հասոյթ:
 financial (Ֆինա'նշըլ) տնտեսական:
 financier (Ֆինանսի'ր) տնտեսագէտ:
 find (Ֆայնտ) գտնել, մատակարարել:
 fine (Ֆայն) ընտիր, նուրբ, տուգանք:

- finery (Ֆա'յնըրի) զարդարանք:
 finger (Ֆի'նկըր) մատ:
 finis (Ֆինի'ս) վերջ, վերջարան:
 finish (Ֆի'նիշ) վերջացնել, լրացնել:
 finite (Ֆա'յնայթ) սահմանափակուած:
 fire (Ֆայր) կրակ, հրդեհ, -alarm, հրդեհի նշան, -arm, հրազէն, -cracker, պայթուկ, -place, կրակարան, -proof, անկէզ, -works, հրախաղութիւն: [թիւն:
 firm (Ֆըրմ) կայուն, հաստատ, ընկերութեան:
 firmament (Ֆը'րմէմընթ) երկինք: [-rate etc.)
 first (Ֆըրսթ) առաջին, (-born, -class, -hand,
 fiscal (Ֆի'սքըլ) գանձային (հասարակաց):
 fish (Ֆիշ) ձուկ, -erman, ձկնորս:
 fissure (Ֆի'շուր) ճեղքուած:
 fist (Ֆիսթ) բռունց, կռուփ:
 fit (Ֆիթ) յարմար, յարմարցնելը, լուսնոտութիւն, -ness, յարմարութիւն:
 five (Ֆայվ) հինգ:
 fix (Ֆիքս) շինել, կարգադրել:
 fixture (Ֆի'քսչըր) անշարժ կարասիք:
 flabby (Ֆլա'պի) թուլամորթ, մեղկ:
 flaccid (Ֆլա'քսիս) թոյլ, տկար:
 flag (Ֆլակ) դրօշակ, (-bearer, -man, -ship, -staff, -stone):
 flagrant (Ֆլա'կըրընթ) անզգամ, բորբոքած:
 flame (Ֆլէյմ) բոց:
 flank (Ֆլանք) կող, թև (բանակի):
 flannel (Ֆլա'նըլ) բրդեղէն, ասուեղէն:
 flap (Ֆլափ) իրար զարնել:
 flare (Ֆլէյր) շողալ, փայլիլ:
 flash (Ֆլաշ) փայլատակիլ, փայլիլ:
 flask (Ֆլասք) սրուակ: [դուկ:
 flat (Ֆլաթ) հարթ, տափարակ, -iron, արփատակ:
 flatter (Ֆլա'թըր) շողոքորթել, -er, շողոքորթ:

- flaunt (Ֆլանթ) ցոյց, ցուցամոլ:
 flavor (Ֆլէ'յվըր) համ, ճաշակ:
 flaw (Ֆլօ') ճեղք, թերու թիւն, փոթորիկ:
 flax (Ֆլաքս) վուշ:
 flay (Ֆլէյ) քերթել, մորթը հանել:
 flea (Ֆլի) լու, --bite, լուի խածած:
 fleck (Ֆլէք) բիծ, արատ:
 flection (Ֆլէ'քշըն) ծուկը:
 fledge (Ֆլէճ) փետրազարդել:
 flee (Ֆլի) փախչիլ:
 fleece (Ֆլիս) դեղմն, բուրդ:
 fleer (Ֆլիր) ծաղրել:
 fleet (Ֆլիթ) նաւատորմիղ, սրընթաց:
 flesh (Ֆլէշ) միս, մարմին, --y, մստա:
 flex (Ֆլէքս) ծուռ, դիւրաթեք:
 • flicker (Ֆլի'քըր) թեւահարել:
 flight (Ֆլայթ) փախուստ, թռիչք:
 flimsy (Ֆլի'մզի) թոյլ, թեթեւ:
 flinch (Ֆլինչ) վհատիլ, ընկրկիլ:
 fling (Ֆլինկ) նետել, ձգել:
 flint (Ֆլինթ) դայլախաղ:
 flip (Ֆլիփ) ձգել, տարածել, շարժել:
 flippant (Ֆլի'փընտ) շատախօս, դատար-
 կախօս: [ընել:
 flirt (Ֆլըրթ) նետել, սիրային կատակներ
 flit (Ֆլիթ) թռչիլ, սաւառնիլ:
 float (Ֆլօթ) ծփալ, տարուբերել, լաստ:
 flock (Ֆլաք) հօտ, երամ, բազմութիւն:
 flog (Ֆլակ) մտրակել, խարաղանել:
 flood (Ֆլըտ) հեղեղ, ջրհեղեղ:
 floor (Ֆլօր) տախտակամած, յարկ:
 flop (Ֆլափ) իրար զարնել (թեւերը):
 floral (Ֆլօ'րըլ) ծաղկային:
 florid (Ֆլօ'րիտ) ծաղկաւէտ, կարմիր:
 florist (Ֆլօ'րիսդ) ծաղկավաճառ, ծաղկա-
 բոյծ:

- flounce (Ֆլաունս) ճիգ թափել:
 flounder (Ֆլա'ունար) շարժելու զուր
 ջանք, տեսակ մը ձուկ:
 flour (Ֆլաուր) ալիւր:
 flourish (Ֆլո'րիշ) ծաղկիլ, բարգաւաճիլ:
 flow (Ֆլո') հոսիլ, բղխել:
 flower (Ֆլա'ուրը) ծաղիկ, -յ, ծաղկաւէտ:
 fluctuate (Ֆլե'քշիւէյթ) տարուբերիլ:
 flue (Ֆլիւ) խողովակ, ծխնելոյգ:
 fluency (Ֆլո'ւլենսի) սահունութիւն:
 fluent (Ֆլո'ւլենթ) սահուն (խօսիլ, գրել):
 fluid (Ֆլո'ւիտ) հեղուկ, հեղանիւթ:
 flurry (Ֆլե'րի) յուզմունք, փոթորիկ:
 flush (Ֆլեշ) շառագնիլ, ցայտիլ:
 fluster (Ֆլե'սթըր) շփոթիլ, յուզուիլ:
 flute (Ֆլիւթ) սրինգ:
 flutter (Ֆլե'թըր) աճապարանք շարժիլ,
 բաղխել (թեւերը):
 flux (Ֆլեքս) հոսիլ, ծորել, լուծել:
 fly (Ֆլայ) ճանճ, to-, թռչիլ, փախչիլ:
 foal (Ֆոլ) քուռակ, մտրակ:
 foam (Ֆո'մ) փրփուր:
 fob (Ֆաս) խարել, գրպան (ժամացոյցի):
 focus (Ֆո'գըս) կեդրոն (ճառագայթից):
 fodder (Ֆա'տըր) շոր խոտ, ճարակ:
 foe (Ֆո) թշնամի, հակառակորդ:
 fog (Ֆակ) մէգ, մշուշ, մառախուղ:
 foggy (Ֆո'կի) յետամնաց (մարդ):
 foil (Ֆոյլ) ընկճիլ, անսայր սուր:
 fold (Ֆոլտ) ծալք, to-, ծալել:
 foliage (Ֆո'լիէճ) անրեւներ:
 foliate (Ֆո'լիէյթ) բարակցնել (ծեծելով):
 folio (Ֆո'լիո) թերթ, միաձալ գիրք:
 folks (Ֆոքս) մարդիկ, ընտանեկան ան-
 դամներ:

- follow (Փա՛լօ) հետեւիլ, -er, հետեւող,
-ing, հետեւեալ:
- folly (Փա՛լի) յիմարութիւն, մոլութիւն:
- fond (Փանտ) սիրող, սիրահար, մոլի:
- fondle (Փա՛նտըլ) փայփայել, գգուել:
- font (Փանթ) մկրտութեան աւազան:
- food (Փուտ) կերակուր, ուտելիք:
- fool (Փուլ) ապուշ, յիմար, -ery, յիմարութիւն, -ish, յիմարական:
- foot (Փութ) ոտք, (յոգ, feet), (-ball, -bath, -board, -bridge, -hold, -hot, -man, -note, -pace, -path, -sore, -step, -stone, -stool, -way, -worn):
- fop (Փափ) պճնասէր, թեթևսօլիկ:
- for (Փօր) համար, որովհետև:
- forbear (Փօրպէ՛ր) հրաժարիլ, ետ կենալ:
- forbid (Փօրպի՛տ) արգիլել, -den, արգիլուած:
- force (Փօրս) ոյժ, զօրութիւն:
- ford (Փօրտ) հուն, գետէն անցնիլ:
- fore (Փօր) նախկին, նախընթաց, -bode, կանխասել, -cast, ծրագրել, կանխատեսիլ, --close, արգիլել, --father, նախահայր, --finger, ցուցամատ, --front, ամենէն առաջ, --go, Լքանել, --head, ճակատ:
- foreign (Փօ՛րին) օտար, --er, օտարական:
- forejudge (Փօրճը՛ճ) կանխադատել:
- foreman (Փօ՛րմըն) վերակացու: [կարգի:
- foremost (Փօրմօստ) առաջին, առաջին
- forenoon (Փօրնո՛ւն) կէսօրէն առաջ:
- forerunner (Փօրը՛նըր) յառաջընթաց:
- foresee (Փօրսի՛) նախատեսել:
- foresight (Փօրսա՛յթ) նախատեսութիւն:
- forest (Փօ՛րէսթ) անտառ:
- foretell (Փօրթէ՛լ) կանխատեսել, գուշակել:
- forethought (Փօրթհօ՛թ) կանխամտածում:

- forever (Փօրէ՛վըը) միշտ, յաւիտեան: [նել:]
 forewarn (Փօրուա՛րն) կանխաւ զգուշացը-
 forfeit (Փօ՛րՓիթ) կորսնցնել (իրաւունքը)
 յանցաւոր ըլլալ:
 forge (Փօրճ) հնոց, to--, դարբնել, կեղծել
 --r, կեղծարար, --ry, կեղծարարութիւն:
 forget (Փօրկէ՛թ) մոռնալ, --ful, մոռացկոտ:
 forgive (Փօրկի՛վ) ներել, շնորհել:
 forgotten (Փօրկա՛թըն) մոռացուած, անյի-
 շատակ:
 fork (Փօրք) պատառաքաղ:
 forlorn (Փօրլօ՛րն) լքուած, անօգնական:
 form (Փօրմ) ձև, to--, շինել, --al, ձևական
 պաշտօնական, --ality, ձևակերպութիւն,
 --ation, կազմութիւն:
 former (Փօ՛րմըր) նախկին, նախընթաց:
 formidable (Փօ՛րմիտապըլ) սոսկալի:
 formula (Փօ՛րմիւլա) բանաձև:
 fornicate (Փօ՛րնիքէյթ) պղծել, շնալ:
 forsake (Փօրսէ՛յք) թողուլ, լքանել:
 fort (Փօրթ) ամրոց, բերդ:
 forth (Փօրթհ) դէպի յառաջ, --coming,
 յառաջիկայ, --with, իսկոյն:
 fortification (Փօրթիֆիքէ՛յըն) ամրութիւն:
 fortify (Փօ՛րթիֆայ) ամրացնել:
 fortitude (Փօ՛րթիթիւտ) արիութիւն:
 fortnight (Փօ՛րթնայթ) երկու շաբաթ:
 fortress (Փօ՛րթրէս) բերդ, ամրոց:
 fortunate (Փօ՛րչունէյթ) բաղդաւոր:
 fortune (Փօ՛րչիւն) բաղդ, հարստութիւն:
 forty (Փօ՛րթի) քառասուն:
 forum (Փօ՛րըմ) ատեան, հրասպարակ:
 forward (Փօ՛րուըրտ) յառաջ, յառաջադէմ,
 to--, դրկել:
 foster (Փօ՛սթըր) սնուցանել, զարկ տալ
 (դաղափարի մը):

- foul (Փառւլ) կեղտոտ, աղտեղի:
 found (Փառւնա) գտնուած, հաստատա-
 ուած, --ation, հիմն, հիմնարկութիւն
 --er, հիմնադիր:
 foundry (Փառւ'նարի) ձուլարան:
 fountain (Փառ'ւնդըն) աղբիւր:
 four (Փօր) չորս, --fold, քառապատիկ,
 --footed, չորքոտանի, --teen, տասնչորս:
 fowl (Փառւլ) հաւ, աքաղաղ, թռչուն:
 fox (Փաքս) աղուէս:
 fraction (Փրա'բչըն) կոտորակ, մաս:
 fracture (Փրա'բչըր) կոտորակ, կոտրել:
 fragile (Փրա'ճիլ) դիւրաբեկ, տկար:
 fragment (Փրա'կմընդ) բեկոր, կտոր,
 նշխար: [թիւն:
 fragrance (Փրէ'յկըրնս) անուշահոտու-
 fragrant (Փրէ'յկըրնդ) անուշահոտ:
 frail (Փրէյլ) դիւրաբեկ, թոյլ, կոշտի:
 frame (Փրէյմ) կազմուած, շրջանակ:
 franchise (Փրա'նչայդ) քաղաքական իրաւ-
 ունք: [ճակ:
 frank (Փրանք) պարզ, անկեղծ, համար-
 frantic (Փրա'նդիք) մոլեգնած, կատաղի:
 fraternal (Փրաթ'ըրնըլ) եղբայրական:
 fraternity (Փրաթ'ըրնիթի) եղբայրութիւն:
 fraud (Փրօա) խարդախ, խաբէութիւն
 --ulence, խարդախութիւն, --ulent, խա-
 բերայ:
 fray (Փրէյ) կռիւ, խառնակութիւն:
 freak (Փրիք) փոփոխամտութիւն:
 freckle (Փրէ'գլ) դեղնագոյն բիծ:
 free (Փրի) ազատ, արձակ, ճրի,--born, ա-
 զատածին, --hand, առատածեռն, --hold
 կալուածք, --stone, որձաքար, thinker,
 ազատամիտ:
 freedom (Փրի'տըմ) ազատութիւն:

- freeze (Ֆրիզ) սառիլ, սառեցնել:
 freight (Ֆրէյթ) բեռ:
 French (Ֆրէնչ) Ֆրանսացի:
 frenzy (Ֆրէնզի) կատաղութիւն:
 frequent (Ֆրիքուընթ) յաճախ:
 frequent (Ֆրիքուէնթ) յաճախել,
 fresh (Ֆրէշ) զով, թարմ, անուշ (Չուր):
 freshet (Ֆրէշէթ) հեղեղ, հեղեղատ:
 freshman (Ֆրէշմըն) առաջին տարուայ
 ուսանող:
 fret (Ֆրէթ) մաշիլ, նեղուիլ, ուտել
 (ժանգի) -ful, խոժոռ, սրտնեղ:
 friar (Ֆրա'յըր) արեղայ, եղբայր:
 fribble (Ֆրի'պլ) ժամաւաճառ լինիլ:
 friction (Ֆրի'քշըն) շփումն, անհամաձայ-
 նութիւն:
 friend (Ֆրէնտ) բարեկամ, -ly, բարեկա-
 մարար, -ship, բարեկամութիւն:
 frigate (Ֆրի'կէյթ) արագնթաց մարտանաւ:
 fright (Ֆրայթ) սոսկում, ահ, երկիւղ, -en,
 վախցնել, -ful, սոսկալի: [բում]:
 frigid (Ֆրի'ճիտ) ցուրտ, պաղ, (վերարե-
 frill (Ֆրիլ) դողալ, սարսռիլ:
 fringe (Ֆրինճ) ծոպ:
 frisk (Ֆրիսք) ցատկուտել:
 frivolity (Ֆրիվո'լիթի) ոչնչութիւն:
 frivolous (Ֆրիվոլըս) սնոտի, աննշան:
 friz (Ֆրիզ) գանգուր:
 frizzle (Ֆրի'զլ) գանգրիլ, խոպոպիլ:
 frog (Ֆրակ) գորտ:
 frolic (Ֆրա'լիք) զուարճութիւն:
 from (Ֆրոմ) բացառական հոլովինախդիր,
 օրինակ՝ (ձէռք)էն, (փայտ)է:
 front (Ֆրընթ) դիմաց, առջևի կողմը:
 frontier (Ֆրո'նթի'ր) սահմանագլուխ:

frost (Ֆրոսթ) սառնամանիք, սաստիկ
ցուրտ:

froth (Ֆրոթհ) փրփուր, թեթևութիւն:

froward (Ֆրո'ուրրա) յամառ, դաժան:

frown (Ֆրա'ուն) խոժոռ, խենթ:

froze, frozen (Ֆրոզ, Ֆրո'զն) սառած:

frugal (Ֆրի'ւկըլ) խնայողական, -ity, խը-
նայողութիւն:

fruit (Ֆրութ) պտուղ, բերք, շահ, -ful,
պտղաբեր, -less, անպտուղ:

frustrate (Ֆրը'սթրէյթ) ի դերև հանել:

fry (Ֆրայ) տապկել:

fuddle (Ֆը'տլ) արբենալ, գինովնալ:

fuel (Ֆի'ւլ) վառելիք:

fugitive (Ֆի'ւճիթիվ) փախստական:

fulfill (Ֆուլֆի'լ) կատարել, գլուխ հանել:

full (Ֆուլ) լեցուն, ամբողջ, կուշտ, -ness,
առատութիւն, -y, լիովին:

fumble (Ֆը'մպլ) խարխափել: [թութիւն:

fume (Ֆիւմ) գոլորչի, ծուխ, մտքի շփո-

fumigate (Ֆի'ւմիկէյթ) ծխոտել, ծխել:

fun (Ֆըն) կատակ, զուեշտ: [նութիւն:

function (Ֆը'նկշըն) պաշտօն, պարտակա-

fund (Ֆընա) դրամագլուխ, կալուածք:

fundamental (Ֆընտէմէ'նթըլ), հիմնական,
կենսական:

funeral (Ֆի'ւնըրըլ) յուղարկաւորութիւն:

funny (Ֆը'նի) ծիծաղաշարժ:

fur (Ֆըր) մուշտակ, կահուղ մորթ:

furious (Ֆի'ւրիըս) կատաղի, մոլի:

furl (Ֆըրլ) ծալել, փաթթել, կապել:

furlong (Ֆըրլո'նկ) մէկ ութերորդ մղոն:

furlough (Ֆը'րլո) ժամանակաւոր արձա-
կուրդ:

furnace (Ֆը'րնէս) վառարան, հնոց:

- furnish (Ֆը'րնիշ) հոգալ, հայթհայթել,
կահաւորել:
furniture (Ֆը'րնիշիւր) կահ կարասիք:
furnow (Ֆը'րօ) ակօս, խրամ:
further (Ֆը'րաւէր) աւելի հեռու, -more,
չատ աւելի հեռու:
furthest (Ֆը'րաւէստ) ամենէն հեռուն:
fury (Ֆիւրի) կատաղութիւն, զայրոյթ:
fuse (Ֆիւզ) հալեցնել, ձուլել:
fusion (Ֆի'ւժըն) հալում, լուծում:
fuss (Ֆըս) աղմուկ, բժախնդրութիւն:
futile (Ֆի'ւթիլ) ապարդիւն, զուր:
future (Ֆի'ւչիւր) ապանի, ապագայ:

G

- Gab (կապ) շաղակրատել:
gabardine (կապրաի'ն) վերարկու:
gabble (կա'պլ) շատախօսել, բարբանջել:
gad (կատ) պողպատեայ ձող:
gag (կէկ) բռնի լռեցնել, բերանակապ:
gain (կէյն) վաստակ, to--, շահիլ:
gainsay (կէյնսէ'յ) հակաճառել, ժխտել:
gait (կէյթ) քալելու կերպը, քալուածք:
gala (կէ'յլա) ուրախութիւն, տօնախմբութիւն:
galaxy (կա'լաքսի) ծիր կաթին:
gale (կէ'յլ) սաստիկ հով, սիւք:
gall (կօլ) լեղի, մաղձ, դառն զայրոյթ,
մորթի քերթուածք:
gallant (կա'լընթ) վեհանձն, արի:
gallant (կալա'նթ) տարփածու:
gallery (կա'լըրի) վերնայարկ, դահլիճ:
gallon (կա'լըն) չափ, չորս քօրթ:
gallop (կա'լըփ) սրարշաւ, արագ ընթացք:

- gallows (կա'լօղ) կախաղան:
galore (կալօ'ր) առատ, շատ մը:
galvanism (կա'լվէնիզմ) հոսող ելեքտրա-
կանութիւն: [մար]:
gamble (կա'մպլ) դրամով խաղալ, (խու-
gambol (կա'մպօլ) ոստիւն, ցատկուտուք:
game (կէյմ) խաղ, գրօսանք:
gang (կանկ) խումբ:
ganglion (կա'նկլիլըն) ջղային կեղրոն:
gangway (կա'նկուէյ) անցք:
gaol (ճէյլ) բանտ, --er, բանտապետ:
gap (կափ) ճեղք, անցք (լերան):
gape (կէյփ) յօրանջել, բերանաբաց մնալ:
garb (կարպ) հագուստ, հանդերձ:
garbage (կարպէ՛ճ) փորժուիք, աղբ: [պան]:
garden* (կա'րտըն) պարտէզ, --er, պարտիզ-
gargle (կա'րկլ) ողողել (կոկորդը):
garland (կա'րլընտ) ծաղկեպսակ:
garlic (կա'րլիք) սխտոր: [ճան]:
garment (կա'րմընթ) հագուստ, պատմու-
garner (կա'րնըր) ցորենի շտեմարան:
garnish (կա'րնիշ) զարդարանք:
garrison (կա'րիսըն) պահակ զօրք:
garter (կա'րթըր) գուլպայի կապ:
gas (կաս) կազ, --eous, կազային:
gash (կաշ) վէրք, կտրուածք (մորթի):
gasp (կասք) հեւալ, հառաչել:
gate (կէյթ) մեծ դուռ, անցք:
gather (կա'տհըր) հաւաքել: [նաւոր]:
